




757

L. I. 5.









ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ



ՏՆՕՐԷՆ

ՏՕՐԹ. Յ. Ս. ՓԱՓԱԶՆԱՆ

(Ա. ՏԱՐԻ)

15 ՄԱՐՏ 1900

(ԹԻԻ 1)



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Շափղ. — Հայուրիւնը արժասահմանի մէջ, Երուանդ Սրմաբէշխանլեան.
— Մարին մէջ, Տիգրան Աճէմեան. — Օտեանի շիրիմը, Ազատ. — Որբը (Չ-
հասն-իւն), Գամեր-Արշախր. — Օգորմաբին մը (Երան Եւանտե գարիւնէր),
Եր. Սրմաբէշխանլեան. — Յիւսասկը (+երիւնտ), * * *. — Գիտական արձա-
գանգ. Յ. Ս. Փափազեան. — Կիսամեակ :



ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ, ՕՂՆԻԿ ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

Վ. Ա. Ռ. Ն. Ա.

Շ Ա Ի Ի Ղ

Կը հրատարակուի ամէն ամսոյ 1ին եւ 15ին

Բ Ա Ժ Ն Ե Գ Ի Ն Ն Է

Պուլկարիոյ համար տարեկան 10 ֆր., վեցամսեայ 5 ֆրանք՝

Արտասահմանի տարեկան 12 ֆր., վեցամսեայ 6 ֆրանք՝

“ՇԱԻԻՂ” ձեռքէ չի ծախուիր :

Առաջին թիւը ստացող եւ ետ չդարձնողը բախանողը
կը նկատուի :

Բաժնեգին եւ դրամ ղրկել ՄԻՍՅՆ հետեւեալ հասցէին

D^r H. S. PAPA ZIAN

VARNA

Իսկ նամակ, յօդուած եւ թերթ ղրկել հետեւեալ հասցէին՝

RÉDACTION DE LA REVUE CHAVIGH

PENSIONNAT ARMENIEN

Varna

Չհրատարակուած ձեռագիրները խմբագրութեան քով կը մնան :

ՇԱԽԻՂ

ՀԱՆՌԻՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

Ա. Տարի

15 ՄԱՐՏ 1900

Թիւ 1

“ Շ Յ Ի Ղ ”

Շախիղը հրատարակ կը հանենք՝
ամէն բանէ առաջ իր բնւ գրական
թերթ մը, որ պիտի կրնայ ժամադր-
լավալարը ըլլալ նաեւ բոլոր այն ող-
ջամիտ գրողներուն, որոնք, փա-
փաքիտով հանդերձ հանրութեան
օգտակար գառնալ, զանազան նկա-
առմաներով ժամանակէ մը ի վեր
հեռու մնացած էին գրական սա-
պարէղէն ։

Ազգային սեռակէտով՝ մեր ուղ-
ղութիւնը պիտի ըլլայ ժողովուրդին
զանազան գոտակարգերուն մէջ
սանդձել ու մշակել համերաշխու-
թեան ու փոխադարձ յարգանքի
պէտքն ու զազափարը, հաստատա-
պէս համոզուած ըլլալով որ մեր
փափաքներուն — որքան ալ համեստ
ըլլան անոնք — ու մեր առաջագրու-
թեանց իրականացումը ուղղակի և
գլխաւորապէս կտխում ունի այդ
գեղեցիկ գազափարին իւրացումէն
ու ընդարձակ սահմանի մը մէջ ու
նոր կիրարկումէն ։

Սիրով ու շնորհակալութեամբ
պիտի ընդունինք աջակցութիւնը
բոլոր անոնց, որոնք, իրենց գըր-
չովն ու գործերով, պիտի ձգտին
ընդհանրացնելու այս գազափարը,
մինչեւ որ անիկա խոր արմատներ
ձգէ հասարակութեան ամէն խա-
ւերուն մէջ, ու ա՛լ անկարելի դար-
ձընէ կրկնութիւնը այն կարգ մը
անհարկի բարքերուն, որոնք գլխա-
ւոր յոսականիչը եզան մեր վերջին
տարիներու գրական և ազգային
գործունէութեան ։

Կը յուսանք որ այս պարզ ու յըս-
տակ ուղղութեամբ պիտի կրնանք
օգտակար ըլլալ հանրութեան, մեր
ուժերուն ներած սահմանին մէջ ։

Երբեք չպիտի յարձակինք ո՛ր և է
անհաստականութեան, ո՛ր և է մտրու-
նի կամ ո՛ր և է հաստատութեան
դէմ ։ Մեր քննադատութիւնները
լի թեւադրութիւններ պիտի ըլ-
լան, համոզիչ և անկողմնակալ,
զուրկ վիրաւորիչ հանգամանքէ ։

Ուրիշներու նկատմամբ մեր ընդ-
գրկած այս ուղղութիւնը բնականա-

բար մեր վրայ պարտք կը դնէ չըզբաղիլ նաեւ անգիտակից յարձակումներով որոնք, հակառակ մեր ակնկալութեան, կընան մեզ գէմ ուղղուիլ, զանազան նկատումներով: Հաճոյքով սակայն պիտի պատասխանենք բոլոր այն դիւտողութեանց կամ քննադատութիւններու, որոնք պիտի ըլլան անկեղծութեան, ազնուութեան և բարեկրթութեան սահմանին մէջ:

Շատից որ առ այժմ հրապարակ կ'ըլլէ իբրև կիսամտայ հանգէս, պիտի վերածուի շարժականութիւն, երբ հասարակութենէն հարկ եղած քաջալերութիւնը գտնէ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ



ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԱՐՏԱՍՈՂՄԱՆԻ ՄԷՋ

Ճամանակ մը երբոր հայութիւնը ուղուէր ներկայացնել իր գլխաւոր բաժանումներուն մէջ, թըրքահայը և ռուսահայը ըկ կը մեծուէին. անոնք էին երկու շարժիչ հզօր մասերը հայ ազգութեան, բարոյական, նիւթական, ընկերական ու մտաւորական մէկէ տաւրի անմրցելի ու անկապտելի իրաւունքներով: Ազգին մարմնոյն երկու շնչերակն երն էին անոնք, կենդանատու, աւուջուէտ ու մարտը

արեամբ առլցուն: Իրօք, շտատնցի վեր, արցունքով ու վշտով յի գտերէ ի վեր հայութիւնը գոյութիւն ունեցած է թուրքիոյ և Ռուսիոյ սահմաններէն դուրս ալ, աշխարհի մնացած մասին անհունութեանը մէջ ցիրուցան. բայց անիկա՞ անտեսուած ինչպէս խորթ ազգը զուակ մը հարազտա աղուոր զաւկըներու երամի մը մէջ, կարծես ազգի մը անմիջական մասը կազմելու իրաւունքէն զրկուած էր, ու անիրաւուածի սրտմտութեամբ զեզուն, թողած էր ազգայնութեան ընդամին ուժն ու կորովը ու սպրած օտար խաւերու ճնշման տակ քչիկ քչիկ, անզգալի քայքայմամբ տարբաղադրուած էր դրեթէ: Թըրքահայը և ռուսահայը հոգածութեան, գուրգուրանքի ակնարկ մը իսկ չէին ետած իրենց մահն ու իրենց արեան այս լայն վրթուճին վրայ, որ կըրնար մեծնալ, զարգանալ, զօրանալ՝ ազգի մը, ցեղի մը գոյութեան վազարն հնչեցնելու սատիճան օտարին ականջն ի վար: Չեմ ուզեր՝ արտասահմանի մէջ հայ գաղթականութեանց կորուստին յաւիտենական բոց անմուսնալի ողբը կարգալ հաս: Հայ կրօնական պետերու և իշխանութիւններու ոճրագործ անստարբերութեան այս դառն ու աբիւնոտ արգիւնքին վրայ պատմութիւնը դրոշմած է արդէն ու պիտի գրոշմէ իր անէճքի կնիքը, որ անջնջելի պիտի մնայ և որ ցաւագին,

կսկծեցնող դատ մը պիտի հանդի-
տանայ յաւէտ մեր ազգին յաջորդ-
սերունդներուն :

Բայց այսօր՝ արատասահմանը ա՛լ
առաջուանը չէ. հոն բունած մտկա-
ղած է հայութեան կարեւոր մաս մը,
կարեւոր՝ ամէն անասկէտներով .
թրքահայուն և ռուսահայուն քոյն
ի վեր կը կենայ արատասահմանի
հայութիւնը , որ , երեւութապէս ,
գոյութիւն ունենալէ չպիտի դադրի
ցորչափ Չարին մագիլը ճնշէ մեզ կով-
կասի սարերուն վրայ ու Արարատի
երկինքին տակ , ցորչափ իսլամական
թուզրտն արեան շագիներու մէջ
շնչահեղձ ընէ մեզ Հայաստանէն
մինչեւ վստփոր :

Եւ ա՛լ վերցած անհետացած է
փճացումի առաջուան ահաւոր վը-
տանդը : Երեք վիթխարի սիւներ ,
սրոնց վրայ կը կրթնի ազգի մը
գոյութեան խաբխիւր , հիմ նետած
են արատասահմանի հայութեան մէջ .
մամուլը , գպրոցն ու եկեղեցին :
Թող մտնայ մեզ պատրիարքարա-
նը , թող էջմիածինը տաք նայ-
ուածքներ չնետէ մեզ , մենք աջատա-
սահմանեան հայերս՝ առանց ռու-
սահայու և թրքահայու խարութեան՝
հեռաւորութիւնները կարելով մտքի
ու սրտի խանդոտ ու գորգուրալից
կապերով , ողջ , անաղարա և հզօր
կը պահենք մեր ազգային գոյու-
թիւնը , երբեք չազգուերով ո՛չ մի-
ջախարէն , ոչ ալ օտարին տարրա-

լուծող ազգեցութենէն , այս երկու-
անգիմադրելի սատարներէն սրոնք
եղած են պատճառ մեր վաղեմի
ազգակիցներուն փաղանդ փողանդ
անհետացմանը : Մենք պիտի կըր-
նանք զմեզ պարտկել , անուցանել ,
ողջ առողջ պահել . ու պատիւ պի-
տի բերենք հայութեան մեծ կեդ-
րոններուն . նոյն իսկ , անուղղակի
միջոցներով , պիտի օգնութեան
հասնինք՝ իրենց ակարօթեան վայր-
կեաններուն , սրոնց համար ամենե-
վին իրենք պատառխանաու չեն ,
արուած ըլլալով վարչական այն
հրէշային կազմակերպութիւնը ու-
րուն տակ կը հեւան՝ ստիւնն յա-
մառ հեւքով մը սակայն՝ թրքա-
հայն ու ռուսահայը :

Սգաա , անկաշկանդ միջուորտ
չնչելու անբաղդատելի առաւելու-
թիւնը կը վայելենք թուրքից և
Ռուսից սահմաններէն դուրս , բա-
ցարձակ տէրն ենք մեր շարժումնե-
րուն , մտածումներուն , գիտումնե-
րուն ու կամեցողութիւններուն ,
սրոնց չի գպչիր օտարին կամայակա-
նութիւնը : Ու ի նկատի առնելով
նաեւ հոգեկան ու բարոյական
արամադրութիւնը արատասահմանի
հայութեան՝ վտանգներու , ձախող-
ուածներու և դժբախտութեանց
ցանցին մէջ դժնդակօրէն խարբալ-
ուած , փորձառութեան կծու դա-
սերով ծեծուած , ու նաեւ մատու-
րական կիրթ , հիւթեղ ու զօրաւոր


ուժերը որոնցմով ճոխացած է ան , իսկոյն կարելի է ըմբռնել խոր մեծութիւնը այն օգուտին զոր ամբողջ հայութիւնը կամ ազգին ներկայ դժնէ վիճակը պիտի կրնայ ուղղակի անկից քաղել երբոր սուկայն անիկա շուրջ խոհականութեամբ , անկանխակալ կարծիքներով , գաղափարի , զգացումի , ներշնչման միօրինակ ու միատարր ներգաշնակութեամբ , յարատեօրէն իր մտածման , իր գործունէութեան , իր հոգածութեան առարկան դարձնէ զայն :

Այսպէս ուրեմն , կացութեան այն առաւելութիւններէն որոնցմով շրջապատուած կը գտնուի արասասհմանի հայը , պարտք մը , մեծ , ահեղ պարտք մը կը ծնի իրեն համար ազգին գոյութեան հանդէպ : Ինչ որ չեն կրնար ընել , իսկապէս , դրապէս չեն կրնար ընել թուրքիոյ և Ռուսիոյ մեր եղբայրները , պարտք մը կը դառնայ մեզ՝ արտասահմանեան հայերուս համար բացարձակ տիրականութեամբ :

Ու մենք երբոր բարոյական այն ուժը , հոգիի ու սրտի այն կտրովը չունենանք ըմբռնելու համար մեր վրայ ծանրացած այդ պարտքին ահաւոր պատասխանատուութիւնը , երբոր անհաշտութեան , սխակարկութեան , անարգ մրցման խեղճակ թալթլումներուն մէջ մտանք ամենէն նուիրական , ամենէն կենսական

այդ բանը , օր մը , ապագային , ամբողջ ազգը համար , հաշիւ պիտի պահանջէ մենէ զուր վաանուած այս թանկագին ժամանակին ու սուրբ պարտականութեան մը կատարման մէջ անզի ունեցած եղբունական զեղծումին համար :

Եւուանդ Սեմսէթիանկեան



Մ Ո Ւ Թ Ի Ն Ս Ե Ջ

Քաղաքին ժամացոյցը , աշտարակին բարձունքէն , կէս գիշեր կը ծանուցանէր , երբ ըսի ընկերոջս .

— Երթա՛նք , Օննիկ , ուշ է :

Ու երկուքնիս միասին , մութ ծառուղիներէն ուղղուեցանք դէպ ի դուռ : Ընդդոդ տաք մը կար . օդին մէջ կարծես կը տատանէին հեռաւոր մեծ հըրդեհի մը ջերմուտ ալիքները , որոնք երևող կը շոյէին անօտ բոցի մը հըպանքովը : Մերթ , սեւիայն , ծովէն խուսափող զեփուռի զովաշունչ վէտվէտուններ ստուերի արագութեամբ պահ մը կուգային պաղշկեցնել ցանցառ շրջիկներու այրող ճակատը : Կարճ ծառերու խիտ անրեւուտքին մէջ ուրուային պլպլուքներով գողգողացող կազի կտուցները հաղիւ կը զօրէին համապարփակ խաւարը ծակծրկել : Թուխպ ու մթին ամպի պատ մը քաշուած էր երկնքին վրայ : Ծովը , մութին մէջ անյայտ , իր հսկայ մուտուքը կը պտըտցունէր ափունքին երկայնութեամբը :

Երբեմն հորիզոնը կը բոցավառէր փայլատակումով՝ անտահման խարոյկի մը բոլոր ահաւորութեամբը : Ու կայ-

ծակին զիկզակները, ամպերու մութ
յատակին վրայ քմահաճ սլացքներով,
գերմարդկային էակի մը անհուն կայծ-
հանէն ժայթքող հրեղէն նետերու
սարսափը կուտային մեր թաղձոտ
սրտերուն:

Շիտակ ճամբէն կերթայինք հիմա,
լուիկ անշշուկ, քով քովի, խօսելու
խնդալու անընդունակ, յայտնապէս
ազդուած մթնոլորտին խռովատանջ
դրութենէն, որ կը սպառնար շղթա-
յազերծիլ: Լայն պողոտային ծայրը,
հեռուն, դիմացնիս կը ցցուէր յաղթ
հակայաձոյլ մարմինը պուլկարական
մայր եկեղեցիին՝ որուն վեց բարձ-
րադիրտակ գմբեթները՝ հորիզոնին
փայլատակման պահուն՝ մէկէնիմէկ ե-
րեւան կելլային ֆանթաստիկ շիկա-
վառու մով: Ու աւելի սագին, սրբա-
վայրին առջեւօքը, կը բարձրանար
մահարձան-կոթողը այն զինուորնե-
րուն եւ սպաններուն որոնք Սլիվնի-
ցան ստեղծեցին:

*
* *

Լապտերի մը լոյսին յուսահատ տար-
տամութեանը մէջ մարդու մը ստուե-
րը երկնցաւ ու անհետ եղաւ, ու ան-
միջապէս ետքը լսեցինք ճզոց մը,
խոճկորի կաղկանձիւնի նման ձայն
մը, որ մահարձանին տակէն կուգար:
Համատարած տրտում լռութեան մէջ
յանկարձ բարձրացող այդ կոծը, որ
մանկական տխուր ձայնի շեշտն ու-
նէր, խորապէս յուզեց մեզ: Մօտեցանք:

— Ըղա՛, ըղա՛, ըղա՛:
Ընկերս, ջղայնոտ, զսպուած հա-
ուս մը հանելով երեք քայլ անդին
ցատքեց՝ իբր թէ տաք երկաթի մը
վրայ կոխած ըլլար: Իսկ ես աւելի
մօտեցայ, սիրտս խռոյլած, տեսակ մը
ստիկունով պաշարուած, աչքերս մու-

թին մէջ թարթափոտ, ուզելով հա-
կընալ այդ սրտաճմլիկ աղաղակին
պատճառը:

Փայլակը ժայթքեց շիկափայլ լու-
սայորդութեամբ:

Ու տեսայ, մահարձանին երկաթեայ
սիւներէն մէկուն խարսխին քովը,
պաղ քարերուն վրայ, սեւ, կլորիկ
կապոց մը, որ անդադար կը ձգար:

— Ըղա՛, ըղա՛, ըղա՛...

Հէք ընկեցիկ մանուկ մըն էր ան:
Ու, դարձեալ, մութը տիբեց միա-
հեծան՝ մարդկային ճակատագրական
թշուառութեան այդ ահաւոր կոծը
խզելով իր թանձրութեանը տակ:

ՏԻԳՐԱՆ ԱՃԷՄԵԱՆ

ՕՏԵԱՆԻ ԶԻՐԻՍԸ

Շահաբրամներու և մայրոյէօկ-
խիէններու հետ խառն ի խառն՝
կարմիր, ճերմակ և դեղին վայրի
ծաղկներով եզերուած ամուսներու
քովէն քսուելով կանցնինք կեր-
թանք դռներու համար Օտեանի
յուրիտենական բնակարանը, որուն
տեղը անձանօթ էր մեզ:

Տեսակ մը ուխտագնացութիւն
էր, առաջադրուած երկար առանէ
ի վեր, ու կ'սպասէինք որ մեր ու-
սանսդի օրերէն մին ներէր սր մենք
ալ մեր կարգին զեռեղէնք մէկ
քանի շիւղ, մէկ քանի ծաղիկ՝ մեծ
հայուն շիրմին վրայ:

Թղթի կտոր մը կար ձեռքերնիս,

Օտեանի գերեզմանը պարփակող մեռերատանին՝ Բէր-Լաշէզի վարչութեան քարտաւարէն տանուած, որ անուաներով ցոյց կուտար մեծ վատրանդիին թողուած տեղը :

Մեր ամէն մէկ քայլին հանդրադ հակիչ պաշտօնեաներուն կը հարցնենք « ԳՏՐԵ բոժանումը , Ալլընիւ Բարթան, Օտեանը » : Ամենքն ալ մեզ կը ցուցնեն միևնոյն կողմը որ կ'ուզուէինք շարունակելով ոնցնելը ինտանուած պարտիզոններու առջեւէն , անոնց անուշ բարումներուն մէջէն , հովանաւէս ու կանանչաղարդ աղբուր ծառերու ներքեւէն , երբ վերջապէս վերջին ուղեցոյցնիս կը հասնի տեղ մը և գլխարկը հասնելով « Ահաւանիկ , պորոններ , հոս է » կրօնք ու կը մեկնի զմեզ բարեւելով :

Օտեանի շիրմին հետ դէմ գիւմաց կը գանուէինք : Ի՞նչ յուսախարութիւն . Օտեանը այդքան անշուք և խղճալի գերեզմանի՞ մը մէջ . . . :

Հաւտանիս չէր ի դոյր և կը կարծէինք թէ գերեզմաննոցին պաշտօնեան մեր վրայ ծիծաղած է սրխալ տեղ մը ցոյց տարով , այնքան հանցաթափ եղած ու ապուշ կըստած էինք :

Բայց իրականութիւնը սխտիւցուցած էր մեզ . ճիշդ էր , իրն էր այդ գերեզմանը և անունը կը նըշմարտէր քարին ճակատը՝ հոյերէն Ք. տասին քով Փրանսերէն ODIAN

գրուած մատիտով , ուրուերու մասուրիչ ոչինչ . ոչ իսկ թուական մը :

Եթէ Օտեանի յիշատակը սարօրինապէս վաւած չըլլար մեր երեւակաութիւնը ու տեսակ մը պաշտամ ունեցած չըլլայինք իր հողակոյտին համար , անշուշտ չպիտի կրնայինք կանգ առնել շքեղ դամբարաններու և հիանալի ու հակայ կոթողներու խառնամուտնութեան մէջ դրեթէ կորսուած այդ քարի կտորին առջեւ և գրեթէս բոց ու կախ , արցունքը աչքերնուս մէջ ստուած , անճրեւէն ու ճիւղէն աղտուած գերեզմանաքարին անհարթ երեսին վրայ բան մը , չքայտարուելէք և խոհրդաւոր բան մը վերաուել չպիտի ուղէինք :

Արդէն ո՞վ կրնար մտքէն անցընել թէ մեր ժամանակակից պատմութեան է՞ն նշանաւոր գէմքերէն մէկը , այնպէս երեսէ ինկած աւարկայի մը նման , նետուած ըլլար այդ ձերպին մէջ , անձանթով ստարակոններու շիրմներու շուքին ներքեւ , և վրան ալ ձգուած ըլլար քար մը , գեանէն հողիւ երկու թիղ բարձրութեամբ , իբր միակ զարդ՝ գլխուն կողմը ունենալով մարմարէ ստիտը մը միայն , ուր՝ շորցած , դրեթէ վտած երկու ճիւղեր կը տեսնուէին . . . :

Ճշգիւ չեմ յիշեր այսօր թէ ի՞նչ տեսնել կ'ապասէինք . բայց սա գիտեմ որ մեր երեւակոյտութիւնը յաղենալու պէտքը ունէր . մեծ սա

փառաւոր դամբան մը մեր գիմուցը ելլելու էր, այնքան անհուն կըզգայինք մէջերնիս Օսեանի համար սնուցուած համակրութիւնը, որ վայրկեանէ վայրկեան կրնար վըշտուիլ, սնչանալ եթէ մեր այցը դաս զափարի խնկոտ նախապատկանութիւնը չունենար լսկ :

Չեւքերնիս իրարու կցած, գըլուխնիս երկիւղածօրէն բաց ու կուրծքերնուս վրայ կ'ըքած և յոյսերու այդ անուշիկ պատրանքէն սրբատաբեկ՝ բառ մը արտասանելու չէինք համարձակած :

Բան մը, անտրոշ և անկապ բան մը մբմուտու վրայ էինք երբ մենէ մէկը ծուեցաւ գետինը փոշիներու մէջէն վերցնելու ուրանքներով հիւսուած սեւ բայց ճերմկնալու մօտ փոքրիկ պտակ մը, անշուշտ Օսեանի շիրմէն ինկած, զոր գրաւ մեր բերած ծայրիկներու փունջերուն քով, քարին վրայ, սովորին ստորաւ : Ո՛վ գիտէ ո՛ր զգայուն հոգին Օսեանի նշխարքներուն բերած էր այդ սգալից խորհրդանշանը, զոր հոգին ու բուրբ գետինն նետած էին զրկելու համար մեծ մարդուն շիրմը իր միակ զարդէն :

Ինչո՞ւ, կը հարցնէինք ինքնին, Օսեան չունենայ իր ապականագիւրը, որուն վրայ շատ բան պիտի գրուէր և գեռ չպիտի բուէր՝ զայն ճանչցրնելու համար լիովին :

Այն անձը որ Օսեանի սրտին,

հանճարին և զգացումներուն հիացողներէն մին եղած էր և գերեզմանին տեղը ու շիրմը իր ծախքովը հոգացած, չէ՞ր կըցած երկուբառ, գոնէ անունը և թուականը գրօջմելու կարող փորագրիչ մը գանել այնքան մեծ Բարիպին մէջ, երբ քիչ մը հեռուն Յովսէփ Թրնուկըրի շիրմը կը գանենք սակեզօծ հայերէն տառերով, պարզ բայց շատ սիրուն :

Մեր ցնցումը և մտածկոտ վիճակը մէկ քանի վայրկեան միայն տեսած էին և արդէն շիրմին շուրջը դառնալ սկսած էինք մտաուրնել ըստիս մեղմիւ շոյելով և փայտալեղով անոր ամէն մէկ մասերը անսովոր երկիւղով մը, սըպէս լծէքնքուշ և զիւրաբեկ առարկայ մը ըլլար ան :

Ասա անդ գրուած անձանոթ ըստարագրութիւններ՝ անընթեռնելի ըլլալու չափ սրբուած՝ մուրի հետքեր ձգած էին լծիացած քարին վրայ. մէկ քանի ալ ապեր նախուած կային զօղգօջուն մասներէ գրօջմուած, որոնց շուրջը Օսեանի հոգին ամառ ձմեռ, բուքին ու սիւքին, ամէն օր ամէն ժամ կը հծծէ, աննախապատկան թուչաւուսով :

Այն մէկ քանի ապերը որոնք լծիւուն զգացումներով աբուագծուած էին, կը կրէին երկու հոյաղջիկներու ստորագրութիւնները, Բարիպէն անցորդներ՝ առանց Օսեանը մտցած ըլլալու :

Այդ սողերէն մէկը պէտք էր
ըլլար Գուրեանին նմանութիւն մը .

“ Բացաւ դու սեւ գերեզման
Օտան մերն է յախեան ”

Միւսը շատ պարզ, հազիւ պաշ-
տում մը արտայայտող՝

“ Պաշտմ գեղգ, անմահ Օտան ”
Հայ-հի Է

Կար նաև հոս մը ատենական կու-
րախով յօրինուած և բառական մա-
քուր գիրով, թերեւս յեղափոխա-
կանի մը կողմանէ նախընտրուած .

“ Հետո քո հայրենի երկրէն եւ հե-
ռու բարեկամներուդ ու սիրելիներուդ
խանդաղասանէն՝ դժուար չի՞ր քեզ զայ .
անմահ Օտան, ու հանգչիլ այս օտար
աստղին եւ սեւ հողին ներքեւ : ”

“ Այժմ հոգիդ կը երեւի՞ արդեօք
վերէն ամեն անոնց օրով սիրելի հայրե-
նիքիդ ազատութեան համար կը ճգնից .
ո՞չն երկրին օրուն հոգի սալու համար
ամբողջ կեանքդ տուի : ”

4 Օգոստոս 1895

Նաև ուրիշ մը՝

“ Համբոյր մը քեզ, ո՞ր պրօթօնիդ
սիրով, համբոյր մը յուզեալ սրտի եւ
արտասուալից աչքով քո մեծ բարեկամին
... ” (մնացածը անընթեանն) :

Ահա ասոնք կը կազմէին Օտեա-
նի ամբողջ տապանադիրը մեր
այցելած միջոցին . անկից ի վեր ո՞վ
գիտէ որքան մտմուռ կանանչյուցած

է իր շիրիմը ու ամէն ինչ ծած-
կած , և Բէն-Լաչէզը այցելուներէն
քանիննք արդեօք անտարբեր և
անգիտակից կանցնին կը գառնան
իր քովէն , ատանց մտածելու թէ
հայերուն է՞ն մեծ մարդերէն մէկն
է պառակած այդ անշուք քարին
ներքեւ , օրուն վրայ մեքանդճիկ
ու յաւաղին , յաւիտենական մըր-
մունջով մը կը թափառի հողին իր
սանջող մինակութեանը մէջ :

Ա.ԶԱՒԵ

ՈՐՐԸ

(Մ Ն Ն Ա Ե Օ Ս ՈՒ Թ Ի Ի Ն)

Ա .

Տեա՛ր իմ, այսպէս չէի եւ երբեք
Մանուկ մը աղօս, խուր, արտաքէկ .
Տեա՛ր, վրայէս լսեցրաւ քափին ,
Քաղցր կը խաւս հացի փրօւրին :

Երբ մութ կոխէ, սիրքս կ'ելլէ դող,
Մարուռ կուսայ ինձ գիշերուան սեւ օդ .
Չի չեմ գիտեր քե՞ մարմինս սկար
Պիտ' զնայ քէ չէ, սքսի մ'հանգիստ, դալար :

Տեա՛ր իմ յարգելի, այսպէս չէի միտ .
Օրեք երջանիկ կ'ապրէի անվիտ ,
Օրեք արեւոտ իմնդի, ծիծաղի,
Որոնց գողին մէջ սիրքս կը գեղի :

Տընակ մ'ունենինք փոքրիկ սիրունիկ
Ուր եղբայրներս, հայրիկս ու մայրիկ
Կ'ապրէինք սիրով : Ո՞վ պիտի կարծէր
Թէ մեր ապագան այսպէս կարծր է :

Ո՞ր կը յիշեմ դեռ, իմ ազուռը մահիս,
Ռուսն ձայնիկին կուսայի հոգիս :
Մեր կովն ու եզներ կայսառ բայց հրու
Որ գոմ կ'երթային հանգիսս պառկելու :

Հապա մեր արե՛ր, հապա մեր պարսէ՛զ .
Ի՞նչ պարաս հունձներ, ծաղիկներ դէզ դէզ
Կուսային մեզի, կուս ու կուռ, առաս .
Մեր կեանքին վրայ չի կար ամպ, առաս :

Բայց, աւա՛ղ, կ'ըսեն շատ են վաղանցուկ
Մարդու այն օրեր, ուր չիկան լաց, սուգ .
Հայր մանաւանդ մէջ այս աշխարհի
Յաւէ՛տ ենթակայ չէ սուրի, անի . . . :

Արդէն սեւ օրէն շատ ստեն առայ
Մեր գիւղին շուրջը դէմքեր վայրահայ
Յը քափառէին . աչքեր մոլեգին
Ման ու աւերակ մեզ կ'սպառնային :

Գառելու սոսիս մեր դժբախտ տոմին
Արիւնն քնկելու ծարաւի էին .
Ի՞նչ ընէլ, Ասուած, վնիւղ էր, ինչ էր
Որ անգութ քուրքը մեզ այսպէս ջնջէր :

Որչափ անողբ անարկու վրնիս
Վրնիս որ կրտ . « Ել գործէ ոնիր » :
Հնչած էր ծամը . կարգն էր մեր գիւղին .
Ա՛լ պէտք էր բռնել մահուան սեւ ուղին :

Յանկարծ գիշերուան լուսեան մէջ մուք
Չայն մը բարձրացաւ ամեհի անգութ,
Չայն մը որ կարծես կելլէր դրժոխէ .
« Թուրքին դանակը բող յուէտ նեղէ ,

Թող սասկի կորի ամէն անհաւատ
Թող ողջ չը մնայ բնաւ ոչ մէկ հաս .
Դրժոխի ձայնը այսպէս կը գոռար .
Ահա բարձրացան կացիներ ու տապար :

Ա՛խ ինչ յարձակում անլուր սոսկայի .
Մեր գիւղը արդէն դիակով էր յի :
Այն ինչ ցաւովին ձայներ առի ես
Ազերս, պաղասանք, անէձմեր պէս պէս :

Հոգեվարքի նեւք, Բայի մանչիւն .
Մինչ բոցն հոգեհին դարձրներ անիւն
Արքն ու գոմը, յրեհքն ու սքնակ .
Վերջն էր աշխարհի . գիւղն էր աւերակ . . .

Ա՛լ կարգը մերն էր . հօրս վազեցի
Միքս կարեվէր, հոգիս անով յի .
Եւ քսի անոր . « հայրիկ, ինչ ընենք » .
— Աւա՛ղ, դաւակրս, բրնաւ չունինք զենք :

Պատասխանեց ինձ : — « Ըսել է մեռնիլ . . . »
« Բայց չունիս, տղայ, ախա ու մագիլ : »
« Տէ՛ր, ողբար մայրս, մամիս գոջէր « կո՛շո » .
Փրկեցէք մեզի, դուք էք մերին յոյս : »

« Վայրի գազաններ » եղբարս գոռացին,
Մէկն առաւ փայտ մը, իսկ միւսը կացին .
Այնքան քայլ էին եղբարս այսպէս
Որ տնիւն գորով մը զեղաց արեւս :

Ան ինչ զօրաւոր, անուշի ցնցում .
Տէ՛ր Ասուած, ինչ էր, շնք քէ որոտում :
Դուներ ու փեղկեր եղան ցարդ փրօւր .
Ա՛խ հար էի ես, իմններս ո՛ր :

ԳԱՄԵՐ - ԱՐՇԱԻՐ

ՕՂՈՐՄՈՒԹԻՆ ՍԸ . . .

(ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՊՍՏԿԵՐՆԵՐ)

Պորոյ թաղերուն մէջ ամէն իժիք
դիմացս կելլար, ծնօտը պարարկող
լաջակովը, դաւառացիի պատուած
կարտած տարազովը՝ մէջքին վրայ
գօտելուած : Երեսին արեւահար մաշ-
կը, փոթփոթ, ճմուռի ճմուռի, ամ-
բողջովին տարամերժած էր այլևս
իզականութեան յետին հրապոյրներն
ալ : Բերանը, լորձնոտ չրթներով պատ-
նէշուած, կը դողդղար շարունակ՝
անկապակից խօսքեր մըթմըթալու

համար, առամնաս լինանքը ցուցնելով
ու ազատա պառուծեան մը բոլոր
զգուանքը ներագրելով:

Ու եւ է անցորդի մը երեւմանը՝ հան-
գերձանքին մէջէն գուրս կերկննար
իր ձեռքերը՝ հերձ հերձ մորթով մը
ծածկուած, ու աղաչանքի անփոփոխ
կոչը, լոյծ, փակչառն, աղնոտող եւ
զանակաւորումով մը, գուրս կելլար
կտրիկափուն շրթներէն:

— Դուրպան էդնիմ, օղորմութի՛ն
մը տուր:

Ու քովի կուգար, քծնող շարժում-
ներով, շան մը քսկաւուքներովը,
սիրտը ողորկելու, գրպանէդ տասնոց
մը փրցնելու համար: Մերժումը կը
գրգռէր զինքը, փոխանակ յուսանա-
անցնելու կը քաջալերէր իր մուրա-
լու մոլեգին խանգը, անոր զգուելի
չունչն ու հնչքը կ'զգայիր շուրջը,
եւ աղաւթու համար այդ վանող մօ-
տաւորութենէն՝ կը նետէր գրամը
այդ կնոյ, որ աղօթքներու եւ մաղ-
թանքներու խառնակ տարտի մը կը
թափէր կանակի ի վար:

Սակայն իր լացին, կոծին, պազա-
տանքին, իր աւուր հացի կարտ վի-
ճակը բացատրելու ձեւին մէջ աչքի
զարնող կեղծիք մը կար, մուրալու բս-
տոր գունկութիւնը, որ արգահատան-
քի տնդ թշնամութիւն կը յարուցա-
նէ մէջդ: Իր աչուրները մորթին ա-
լիքաւորութեանը մէջ արցունքի խո-
նաւութեամբ մը միշտ պարզապէս
կարծես ձիգ մը կ'ընէին քեզ հրապու-
րող պազոտութեամբ մը վասելու,
խրեւոյ նայուածքներուն մէջ զգայական
նութիւն զարթուցանող լիտի մեղկու-
թիւն մը գնելով: Սե իրօք, այդ աչ-
ուրները, արեւելցիի յատուկ նուշի
լայն ձեղձուածքով, սեւ ծարուրուած
թարթիչներու հաճոյաւէտ հովանաւո-

րումով անդամադրելի թովչութիւն մը
ունենալու էին տարիներ առաջ, մոր-
թին հերձոտուելէն, պառուծեան
սղեղցնող աղէտներէն առաջ: Բայց
հիմակ, աչքի այդ վայնջական ազ-
ուորութիւնը՝ միտի նողկարի ապա-
կանութեան քով տարօրինակ հակա-
զբոսութիւն՝ հաճոյքէ աւելի զգուանք
կուտար տեսնողին: Իր քծնքը ան-
ցորդին առջեւ փռած ատեն անպատ-
կատ լալկանութեամբ, կնոյ հնարքի
ինքնամոռաց յետադարձումով մը՝ կը
փորձուէր գրպանը շահագործել՝ սուրբ
արգահատանքէ մը աւելի մեղապարտ
զրգուծիւն մը ներշնչելով անոր:

Ասոր համար միշտ խոյս կուտայի
անկից, հեռուէն տեսնալուս պէս:
Բայց ինքը, ինձի ազգած խորին
զգուանքը հասկնալով հանգերձ, կը
հետապնդէր իր մուրալու յուսանա-
կան բանաձեւին մէջ ողորմութի կեղ-
ծաւոր մեղմեխանքով մը:

*
* *

Վառնար, հիւանդանոցի ստուերոտ
որահներուն մէջ՝ թշուառութիւնը կը
հեծեծար: Ազաղակող համառփեւ աղ-
քատութեան մէջ միտ միտակ, նրբա-
կազմ ազդիկ մը, երանարեր մուսա,
կը մաքսուէր անոր գէմ, գիւցարին
անխոնջ թափով, իր ազնուական ժը-
պիտին տակէն լալով ամբողջ ազգի
մը անդթօրէն եզական այս վիճա-
կին վրայ:

Մերկութեան, անօթութեան, ցա-
ւի ու արցունքի, հասաչանքի ու
սպառնալիքի այդ ահաւոր արկիծու-
մը աչքիս առջեւ կը պարզուէր օրը
օրին, իր գալարումներուն, սոսոս-
տումներուն, ընդլայնումներուն ու
տուսագուններուն մէջ՝ մութ անպուսկ-
ներով, ցուրտ ցցուածքներով պա-

տառուած : Պօլսոյ սալարկներուն վրայէն վազող արիւնը կը շարունակուէր Պուլիարիոյ հողին վրայ՝ արցունքի ձեւին տակ : Ու Ֆրէյզըր, մետաքսէ հսկայ թաշկիրակ մը ձեռքը, վազած էր արցունքի այդ հոսանքը չորցնելու :

Գրասենեակին մէջ, ուր կը կենայինք ատուրնէ մինչև մութ, կուգար կը խտանար այդ լայնածաւալ թշուառութիւնը, որուն հանդէպ կերուայ թէ միայն անկլո-սաքսոն նկարագիրը աննկուն կը մնայ : Կիչներու, աղբիկներու, տղոց տոգոյն, սարսափահար վոնմակ մը, փարախի ճամբան կորուսած ոչխարի շուարուսով, կը նետուէր հոն, սուրէն ու մահակէն ճողոպրուած կեանքը ապրելու տեսակ մը անգիտակից կատաղութեամբ : Ամբոխը, իր այդ հոգեկան վիճակին մէջ՝ իրաւցնէ ահարկու է : Պայթուցիկ նիւթերով օղակուած փրփուրի զանգուածն է ան, որուն զգուշ փափկութեամբ դպչելով միայն կրնաս ահուելի պայթման մը առաջքն առնել :

Օր մը, սակայն, մեր գրասենեակին ամբողջ միջոցը ծածկող այդ ամբոխին խեղ կարգերուն մէջէն ձեռք մը դուրս երկնցաւ, յուսահատ ճիգով մը առաջ մղուած, թուխ ու ճմով կուած մորթով ձեռք մը, անզղի մագիլին պէս բան մը, պաղատանքի աղաղակով մը ընկերացած, որ սարսուռ մը պտըացուց ոսկրներուս մէջ :

— Կէ գուրպան էղնիմ, ինծի էլ օղորմեցէք . . .

Եւ անմիջապէս կտրը տեսայ գլուխը մուրացուէիին, Պոլսոյ քարայտաակներուն մակաբոյժ-բնակչին, որ կը յառաջանար իր շուրջի հոսանքը վանելու կոյր ջանքով մը, ծովը ինկած մարդու մը պէս որ գերանի մը պըլլուելի կուզէ բնազգարար : Կուլար . իր սեւ խոշոր աչքերէն արցունքներ կը

վազէին՝ մորթին խորափոր ակօններուն մէջ տարածուելով մինչև թուշը : Ու հեծկլտաց . « Անօթի՛ եմ » : Այդ կիրնը ճանչնալէս ի վեր, առաջին անգամ ըլլալով իր լացող աղերսին մէջ ցնցող անկեղծութիւն մը զգացի : Արցունքները, որ իր դէմքին աւերուած կը թրջէին, սրտէն կը բխէին շիպ շիտակ : Իր մուրալու ձեւին մէջ արուեստակութիւն չիկար ա՛լ : Աչքերուն մէջ կոզոպտելու առջի խանդը չէր վառեր, հապա անօթութեան վերջին կածկլտուքը : Այո իրօք անօթի էր :

Բայց այդ պահուն անօրինակ բան մը պատահեցաւ . մուրացուէին շրջապատող կիրներն ու աղջիկները միահաղոյն շարժմամբ կտ մղեցին զայն անէծքներու ու հայհոյանքներու տարափի մը տակ . հրեցին հրձտկեցին մինչև սրահին դուռը, ուսկից դուրս ինկաւ ան գլտորելով, առանց ճիկ մը հանելու : Տեսարանը շինիչ չէր . նոյն իսկ սրամտութիւն մը զգացի այդ բիրտ ամբոխին դէմ, որ չարաչար կը հարուածէր մուրացիկ պառաւ մը : Երբ հանգարտութիւնը վերահաստատուեցաւ, մէկ քանիներու հարցուցի իրենց ընթացքին պատճառը :

— Աս տեղի հաշը մե՛ր իբաւունքն է, պոռացին, անիկա դուրսն ալ կրնայ մուրալ :

Տրամարանութիւնը, որ անօթի՛ ամբոխէն կը բխի, այլապէս զգուցուցի է :

*
* *

Բայց անիկա, մուրացուէին, այդչափ նախատօրէն վախտուած, դարձեալ կեաւ յաջորդ առաւուն, ուրիշներէն առաջ, բիրտ ստիներու հանգիպումէն զերծ մնալու համար : Հանգերձանքը, ճիշդ ան զոր Պոլիս կը սեռնայի միշտ, ծըւիկ ծըւիկ, գրեթէ

կը թափթփէր մաքմնին վրայէն: Ար-
րահին մէջ, որ ամացի էր, թող
սուաւ էր լացուկոծը, աչնքան ջա-
րատեօրէն բուռն կերպով որ յարակից
սենեկէն գուրս ելաւ Յր. Ծրէյզըր:
Մութացկանը, զաչն նշմարելուն պէս,
զէմը վազեց, երեսի վրայ ինկաւ
փռուեցաւ գետինը անլուր վաճառու-
նով: Գանասուհին, խրտչած, ետ քաշ-
ուեցաւ: Շեշտուած հարկազու թեան մը
պատկերը զորհիմա կը կարմէին հոտ հաչ
մութացուհին եւ ամերիկացի աղջիկը,
իրօք եղական էր: Մէկը՝ բոլոր երեւ-
ւակացի զազրութիւնը կը թանձրա-
ցընէր իր այլակերպօրէն տեղ էու-
թեան վրայ, միւսը արքէնի նրբա-
գայութեան մը մաքուր շուքը կը սրփ-
ւէր իր ազնուական անձէնքին շուք-
ջը: Մէկը մարգկային գոհակութեան,
կեղծաւորութեան, կոշտ շաղուածքին
տեսակ մը իտէլացու մն էր, միւսը
տեսական սրբութիւնը մարմնին որ
աշխարհի երեսը կը յածի մատերու
հպումովն հալցնելու, վանելու բոլոր
տգեղութիւնները, ստորութիւններն
ու թշուառութիւնները...

Ծրէյզըր, քուրջերու այդ խլրտուէն
կոյտը պահ մը դիտելէ ետքը, զար-
ձաւ հոն դանուող սրաշտօնեաներուն
ըսաւ իր տարօրինակ հայերէնով.

— Այս խեղճ կինը Շուսթա զրկե-
ցէք, խնդրեմ:

Ի՞նչ եղաւ, չեմ գիտեր. բայց այս
խօսքին վրայ՝ մութացկանին մարմն-
նը որ երկիւղած, ազնուարկուէ եր-
կրկապութեան մը մէջ կը դողդոջը
գետինը, յանկարծ վեր ցցուեցաւ խե-
լագարի շարժմամբ, ու սկսաւ լա-
զուկները առատանել վայրագօրէն,
պոռայով:

— Չի՛մ էրթա, չի՛մ էրթա, չի՛մ
էրթա...

Անհնարին եղաւ զինքը համոզել:

Շուսթա մտանաւ որ շէնքեր վարձուած
էին այդ տեսակ խեղճերու համար: Եւ
տրուած որոշումը անդառնալի էր, ա-
նոր համար որ անդլիացիէ մը կը բը-
խէր ան: Մութացկանը, անբողբուելի,
լաց լալազին ելաւ գնաց, յաջորդ օրը,
եւ միւս օրերը միշտ գալու, ամլհատո-
բէն գալու, բայց ամէն ստուն միւս-
նոցն պատասխանը ընդունելու համար:

— Շուսթա՛:
— Չի՛մ էրթա:
Եւ, ամիսներով այսպէս:

*
* *

Նպաստը վերջացաւ. Պուրլարիոց
հայ գաղթականութիւնը սկսաւ ցըր-
ուիլ քայքայուել. իրերը իրենց նախ-
կին վիճակն ստացան վերստին, ու
Ծրէյզըրն ալ մնաւ իր բարերարու-
լու սիրելիական գործէն Կուու, ամե-
րիկեան հիւանդանոցի մը հանգոտա-
ւէտութեան մէջ, ինք որ, բարեգոր-
ծութեան անլհատ գիտուոր, անշուշտ
պիտի ուզէր գործունէութեան պատ-
նէշին վրայ իսկ իր ծառին շուսթ
փչել:

Ու այդ անսոտանալի աղջկան մահ-
ուընէն զգացած բուռն վշտիս մէջ,
օր մը, փողոցը, սոսկումը ունեցաց
տեսնելու նորէն մութացուհին, իր
զարչահոտ ցնցոտիներուն մէջ, իր
կեղծաւոր մակաբոյժի ազաչաւոր
նայուածքովը, իր ամբողջութեանը
մէջ շեշտուած այլակերպութեամբ մը:
Ու խոյս տուի անոր երեսուսէն՝ չը
բնելու համար իր մղձաւանջային ա-
ղբրանքը:

— Քէ զուբպան էղնիմ, օգորմու-
թին մը...

Ե. ԱՄԱՔԷՇԵԱՆԵԼԵԱՆ



ՅԻՇԱՏԱԿԸ

ԳԱԼՈՒՍ ՄԵՇՏՈՒՃԵԱՆԻ

Ի՞նչ սե գեղեր է. սերունդ բուսանք,
Կը լեմ բարսի բանալիները հոտ.
Լեռնին հեղեղի ևստը դեղ է ևս,
Հուր իսկառանջ. ծուր լեռնի:

Գերեզմանի սլաք մը կուտայ ինչի.
Գերեզմանի բուսանք իսկառանջ,
Սուրբի վրէժնի... սերունդ է հեղեղ,
Հոգի է կուրսի ճային հագագո:

Ձրայան ծուրնի է, ևստը սրբանոց ալ.
Վերսին իսկառանջ իսկառանջ...
Կեանքին, սպառն բան, լե իստը բուսանք,
Մահը սրայ դեղի վրէժնի դեղ:

Աղօթի. յայտ, գգսանոց...: Ի՞նչ սե գեղեր մը:
Ձրայան-ե՛ր սփռն, հեղեղը իսկառանջ:
Ինչո՞ւ է հեղեղ. իսկառանջ լեռնի,
Փռնի սուրայ, բարձր յիշատակ...:

* * *

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ՄԻՍ, ԽՈՏ ՔԷ ՊՏՈՒՂ

Դիտուած է որ քաղաքակրթութիւն կոչածնին ո՛րքան առաջ կ'երթայ, տարօրինակութիւններն ալ ա՛յնքան կը շատանան:

Նոր վարդապետութիւններ, նոր սկզբունքներ ամէն օր հրապարակ

կը նետուին փոխելու, յեղաշրջելու համար ընդունուած սովորութիւնները որոնցմէ ձանձրացած կերելի մանաւանդ Ստրասն ցեղը:

Վերջերս Լոնդոնայի մէջ կարգ մը խտտակերներ և պողպակեղեններ, ճրգեղով թրանսպարի պատերազմին պատճառով առողտուկները, ելեր համաժողով մը կազմել են քննելու, հասկնալու համար թէ այս վարդապետութիւնները առաջ կերթա՞ն և ո՛րքան արդիւնք ձեռք բերուած է մինչեւ այսօր:

Բարեբախտաբար թէ գծբախտաբար համաժողովին եզրակացութիւնները աննպատակ ելք մը սննցեր են, այնպէս որ անդամներէն շատերը սրտի ցաւով համոզուել են թէ առանց միսի մարդկային ցեղը ա՛լ աւելի կը տկարանայ և օր մըն ալ բոլորովին պիտի ոչնչանայ:

Այդ խտտակերներէն մէկը՝ յամա համոզումով մը, որ միայն անգլիացի ժողովուրդին յատուկ է, պատրաստելու և համաժողովին է ներկայացուցել վիճակագրութիւն մը ապացուցանող թէ՛ հիմա որ մարդիկ միս ուտելուն համար միջին հաշուով 48 տարի կապրին, պիտի կրնան նոյն համեմատութեամբ 96 տարի, այսինքն կրկինը ապրիլ և մինչեւ իսկ կարելի պիտի ըլլայ առանց գծուարութեան հասնիլ 120 տարեքին եթէ միայն խտտուտեն... կենդանիներու նման:

խոտակեր կին բժիշկ մըն ալ — վասնցի կիներ ալ կան խոտ ուսող և կարծուածէն շատ աւելի — յայտարարած է թէ միտը մարդուն աւրինը կ'ապակոսնէ, ջղային գրութիւնը կը խոնգարէ և ուզեղը կը սկարայնէ :

Վերջապէս բրոֆէսոր Ալբրոթ բաւական չար եղած է յայտարարելու թէ ինչ կենդանիի միտ որ ուտենք այդ կենդանիին ուղղակի և անլրէպ ազդեցութիւնը կ'ունենանք մեր սովորութիւններուն, նկարագրին և անհատականութեան մէջ, այնպէս որ, զոր օրինակ, եզան միտ ուտելով, եզան նմանիլ կ'սկսինք և կամ խողի միտ ուտելով խողի կը փոխուինք !!! : Արդեօք բրոֆէսոր Ալբրոթ իմացած է կամ գիտէ՞ թէ թուրքերը ոչխարի և գառուկի միտ ուտելով հանդերձ մէյմէկ գազաններ ըլլալէ չեն դադրած . . . :

Կը յիշեմ որ այս կարգի, սակայն ոչ նման գաղափար մը և անձնական հետազոտութիւններու արդիւնքը յայտնած է ինձ օր մը մեր նշանաւոր բժիշկներէն մէկը և յանձնարարած է որ հանդգտած գիւղացիներնուս գէմքերը ուշի ուշով գնենք « օրոնք, կըսէր, ընդհանուր գիծերուն մէջ մէյ մէկ կենդանիի նմանութիւններ ունին՝ կովու, եզան, գոմէշի կամ ոչխարի, որոնց հետ կը գանուին օրն իբրան, մէկ յարկի ներքեւ կ'ապրին, մէջերնին տեսակ մը եղբայրակցու-

թիւն հաստատուած է և ամենէն աւելի՝ կիներն աւհասարակ կաղաղուին անոնցմէ որոշեալ ժամանակներու մէջ » :

Չգիտենք թէ այս յայտնութիւնները ո՞ր աստիճան հաճելի են մեզ նման յամառ մտակերներու, սակայն պէտք է մտածենք ալ սր այդ յայտարարութիւնները ընող անձեր փորձառուներ են, մանաւանդ անձնական փորձառութիւնով գիտնէն !!! :

Պաղակերութիւնը ժամանակէ մը ի վեր իր կարգին մաս մը սիրահարներ ունեցած է յորմէ հետէ խոտակերութիւնը ընդհանրապէս սկսած է :

Հին խոտակերներ նոր պողակերներ եղած են իրենց տեղը ձգելով մտակերութենէն ձանձրացածներու, այնպէս որ օր մը այսօրուան պրազակերները շարունակելով ճամբանին պիտի հասնին մինչեւ թղթակերութեան կամ հողակերութեան ու մենք ալ պիտի հետեւինք անոնց քանի որ միշտ առաջ պէտք է երթոնք քաղաքակիրք կոչուելու համար :

Դոնտոնի այդ նշանաւոր համառ ժողովին մէջ զիտուեր է որ երեւելի չէր թոր Ուէյլէն պողակերը բացակայ է :

Ուէյլէն խենդ մը չէ, բայց կատարի պողակեր մըն է, ինչ որ շատ տարբերութիւն չունի սուսմիւնէն : Այս անձը կը պահանջէ եղեր որ մարդիկ իրենց նախնական վիճակին վերադառնան պարզացնելով անհագառութիւնը, հագուստները և

բնակութեան անցերը, այսինքն պատու ուսան, Ազամի հագուստովը զարգարուն և խառով ծածկուած հիւզակներու մէջ բնակին. բայց չեմ կարծեր որ ըսած ըլլայ թէ Պուլիարիս չապրին և կամ եւրասպէն հեռանան ու Տահովէ երթան: Այսուհանդերձ Ուէյլէն ինքը 8 տարիէ ի վեր կը հեռուի իր նոր վարդապետութեան և գեւեղատապ մը կամ ժանտառնեզ մը իր դուռը չէ զարկած:

Ուէյլէն կ'ըսէ նաեւ թէ մարդոց և կապիկներու նախահայրերը հարազատ եղբայրներ են եղեր և յետոյ մէջընդմիջ պաղակերութեան խնդիր մը ծագելով իրարմէ բաժնուեր և կապիկներուն մեծ հայրը անտառին մէջ առանձնացեր է միտի երես չը տեսներու և ըսկ պատուով սնանեբու համար. և այսպէս մարդը զարգացեր ու կապիկը մնացեր է ա՛յն վիճակին մէջ ուր որ էր. ուրեմն Ուէյլէն իր ցեղաբանական ենթադրութիւնովն իսկ կը տարբերի մենէ, ինք որ պաղակեր մըն է:

Ամէն պարագայի մէջ, եթէ ընդունինք որ մշակերութիւնը կարգ մը հիւանդութիւններ առաջ կը բերէ, սակայն խտակերութիւնն ալ շատ փայլուն առողջութիւն մը չի շնորհեր մարդուն: Երբեք խտակերները կորովի և հաստատակազմ չեն եղած, ընդհակառակը անարիւն և շատ նիհար մնացած, արեան շրջանին շատ տկարացած

և մաքու չափազանց արամուղիւր եղած են. ձգեցէք որ անմարսողութենէ և սեւ լիարդի ու երկիւսմունքներու հիւանդութիւններէ երբեք ազատ չեն դանուած:

Ուէյլէն իր պաղակեր վիճակին մէջ իսկ տարբերութիւն մը չէ սենցած խտակերներէն. նոր վարդապետութեան հետեւէն մէկ տարի յետոյ իրեն համար մտածելը և խտուիլը մէյ մէկ ասնջանքներ եղած են. ոչ ցորեկը սարի վրայ կենտրու կարողութիւն ունեցած է և ոչ ալ գիշերը՝ քնանաբու, այնքան որ հիւանդ իյնալով բժիշկը գաղտնի իրեն առած է ճմլուած միտի ջար և օրը երեք անգամ կրկնելով միտի սննդառութիւնը՝ 4-5 օրուան մէջ բաւական զօրութիւն եկած է վրտնու:

Արդէն նոյն իսկ եթէ անդամազննական հետազոտութիւն մը ընենք, պիտի տեսնենք որ ստամոքսի մարսեցնող հիւթը եւ ախտաները յատկապէս շինուած են մտային տակիքներու համար, եւ ասանց հակառակ գործելը՝ բնութեան հակառակիլ ըսել է, ինչ որ ցատալի արդիւնքներ կուտայ միշտ:

Ահա այս կարգի ջախջախիչ փոտտերով Լոնարայի համաժողովին անդամներէն մէկ քանիները յաջողած են միտքերը պղտորել եւ կատաղի խտակերները ու մտակերները զղջացած կերելին իրենց մէջ հրախրած ըլլալնուն երն այլով համաժողովուրդի համազումով տարբեր

ուխտագրութիւններ, որոնք այսուհետեւ կրկին մտակերններու վարտար մտնելով ակտրայուցած են համա- ժողովին արդիւնքները եւ նոր վար- գապետութիւններուն ընթացքը հա- շտոյցներով մեզի տղաատմ են սու- կալի փորձանքէ մը, խտտակերու- թենէն՝:

3. Ս. ՓԱՓԱՋԵԱՆ

Շարիշի խմբագրութեան ան- դամներէն Տիար Կրօն Միքայելեան՝ վերջին օրերուն մէջ իր ունեցած ճիւղանդութեան պատճառաւ մի- այն չէ կրցած աւխտակցիլ Ա. թիւին:

Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Կ

Բ. Դուռը, Օրմանեանի մեղսակցու- թեամբը եւ քաղաքական ժողովի վատ- շուէր անդամներուն դիւային գոր- ծակցութեամբը, բեկանել տալէն յե- տոյ Կիլիկիոյ կաթողիկոսական օրի- նաւոր ընտրութիւնը, հիմակ ալ, վատաբար, խոշոր կից մը կուտայ Օրմանեանի փորին: Վասնզի Բ. Դու- ուր բացարձակապէս մերժած է ընդու- նիլ պատրիարքարանի միջամու- թիւնը Կիլիկիոյ կաթողիկոսական նոր ընտրութեան գործողութիւննե- րուն մէջ, եւ Օրմանեան, ազգին առ- ջեւ խապաւ խայտառակուելու եւ վար- կաբեկ ըլլալու վախով՝ անմիջապէս փութացած է բողոքադիւր մը ներկա- յացնել Դրան: Մտիկ ընող պէտէ ըլ- լա՞յ զինքը:

— Բարեգի մէջ մտնել է Գէորգ Պէյ Գարագէնեա, հոչակաւոր պետը էրամ-

եան գերդատանին: Իր զաւակներն են Արբախաճ Բաշան ու Կարապետ Պէյը. երրորդ զաւակը, էրամ Պէյ, ասկէց եօթը տարի առաջ անձնատպան եղաւ Պոլիս՝ իբր երկու միլիօն ոսկիի հարստութիւն մը քանի մը տարուան մէջ Բարիզ ուտել լինցնելէն ետքը: Այս հայ ընտանիքը, հսկայական հա- ըրստութիւն մը ունենալով հանգերձ (իբր 100 միլիօն ֆրանք) իր ազգին համար բան մը ըրած չէ, արեւելեան զեղխութեամբ եւ մեղկութեամբ թա- թաւուն: Ազգը, աւուր հացի կարօտ, իրաւունք ունի շատ բան սպասելու իր այս կարգի զաւակներէն, ու ոչինչ ստացած է անոնցմէ. հետեւապէս ազ- գին ալ կանխօժէ, կարհամարէ՛ զանոնք եւ կը թքնէ անոնց երեսին:

— Կարնոյ շրջակաները՝ ուսու- բերը աննդոտ գործունէութեան մէջ են հայեր որալու համար իրենց փրկարար եկեղեցիին գողը: Արգէն իսկ քանի մը հարիւր ընտանիք յա- ըրած են ուսուցաւանութեան: Ինչպէս կ'երեւայ, Ռուսը մեզի կուլ տալու համար իր սահմաններէն ալ դուրս կելլայ: Վերջին լուրերուն նայելով, այս զաւանափոխութեան առաջքն առնուելը է եղեր:

— Սուլթանին հրամանովը, տասն- նորգի տուրքին վրայ հարիւրին երկու- յաւելում մը եղեր է: Արգէն երկար ատենէ ի վեր՝ այս տուրքը 2 1/2 0/0 աւելցած էր, որով հիմակ գեղացիները իրենց հունձքէն 100 ին 14 1/2 ր պարտաւոր են կառավարութեան տալ: Հայաստանի ողբալի վիճակը յայանի ըլլալով, երեսակայիլ հայ զեղջուկին դրութիւնը՝ տուրքի այս անակնկալ յաւելման վրայ:

Отношения Н. Драгулевс
Пенатомия «Орхенмал» — Варна.

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՍԵՌ ԿՐԹԱՐԱՆ

ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ՅԵՐԵԿԵԱՅ

Հաստատւած 1898 Սեպտեմբեր 1 ին

ՎԱՌՆԱ

Կրթական Նախարարութեան 11128 թիւ արտօնագրով

Կ'ընդունուին գիշնրօթիկ տշակերտներ՝ գոհացուցիչ պայմաններով :

Առողջ սնունդ , կատարեալ մաքրութիւն եւ ընտանեկան խնամք :

Ուսմանց եւ գիտութեանց ամէն ճիւղեր կ'աւանդուին :

Օտար լեզուներէն պարտաւորիչ են պուլկարերէնը եւ ֆրանսերէնը : Փափաքողները կ'ընան հետեւիլ նաեւ անգլիերէնի կամ գերմաներէնի դասընթացքին :

Ջութակի եւ դաշնակի դասեր ալ կ'ը տրուին մասնաւոր վճարումներով :

Աւելի ընդարձակ անդեկութիւններու համար՝ դիմել հիմնադիր-անօրէնին , հետեւեալ հասցէով՝

GRON MICAËLIAN

PENSIONNAT ARMÉNIEN

VARNA (Bulgarie)

ՓՈՐԱԳՐԻՉ

ՅԱԿՈՅ ՄՈՍԿՈՖԵԱՆ

Կը պատրաստէ ամէն տեսակ զմուռ եւ լուսանկարէ փորագրութիւն . տօսախի , սակիի , արծաթի , պողպատի եւ ամէն տեսակ մետաղներու վրայ գեղարուեստօրէն կը փորագրէ պատկերներ եւ զարդանկարներ : Դիմել Արեւելեան Տպարան :

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշտութեամբ եւ փութով կը կատարուին :

ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ

Օ. ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

Վ. Ա. Ռ. Ն. Ա.

Երկրորդ քաղ, Շիրազնախա փողոց, (Սապաղը լեզմեի կից)

Կը ապագրս ին հայերէն, պուրկարերէն, զաղղիերէն, յու-
նարէն, աստուերէն և այլ լեզուներով այցեատման, հարցեատման,
հարսանեկան հրատարակիր, ազգարարութիւն, նամակագրութիւն,
պահարան, մահատա, վաճառականական ամէն տեսակ գործեր,
գիրք, քաղիր, և այլն:

Գունաւոր և սոկեղծ գարգազորներու համար ամէն լեզուէ
ճոխ տառեր և մասնաւոր գործիքներ կը գտնուին:

ՄԵԾ ԽՆԱՄՔ ԵՒ ՄԱՔՐՈՒԹԻԻՆ

ԳԻՆԵՐԸ ՅՈՅԹ ԳԻՐԱՄԱՏՅԵԼԻ

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ նետու-
թեամբ և փութով կը կատարուին:

IMPRIMERIE ORIENTALE

ONNIK PARSEGHIAN

11 Outchast, rue Chiptchensfia, VARNA (Bulgarie).

